Ընդհանուր տեսադաշտ

1. ***Ինչպիսի՞ն է Ձեր տեսակետը քաղաքի զարգացման հիմնական գերակայությունների մասին:***

Բազում տարիների ընթացքում քաղաքի զարգացման հանգուցային սկզբունքների կոպիտ անտեսումը, հանգեցրեց այն բանին, որ փաստորեն գոյություն չունի ոլորտ, որը սուր և անհապաղ լուծում պահանջող հարցեր չունենա: Լավագույն միջազգային պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրատեսական և կայուն զարգացում հնարավոր է միայն վարելով ինտեգրված և ներդաշնակված քաղաքականություն:

Հետևաբար, մեր ծրագրի նախաձեռնությունները բեկվում են չորս բաղադրիչում.

- Հասարակության շահերից ելնելով՝ մատչելի, որակյալ կրթություն և առողջապահություն, համարժեք սոցիալական պաշտպանություն, հարմարավետ բնակարան և ժամանակակից չափանիշներին համապատասխան կոմունալ սերվիս, անվտանգ միջավայր, կայուն աճող մշակութային և հանգստյան տարածություն:
- Բիզնեսը խթանող միջավայրի ստեղծման համար՝ անդադար վերապատրաստում շուկայում պահանջվող մասնագիտությունների և տեխնոլոգիական ծրագրերի հաշվառումով, ֆինանսական ռեսուրսի մատչելիություն, փոքր և միջին բիզնեսի աջակցություն, ամենանշանակալից նորարարական նախագծերը ժամանակին իրականացնելու նպատակով հանրային-մասնավոր գործընկերության սխեմաներին ինտենսիվ մասնակցություն, վրացական (և ոչ միայն մայրաքաղաքի) բիզնեսի մատուցման ոլորտում թերությունները արմատախիլ անելու համար համապատասխան պրոֆիլի մատակարարողներին շուկայում հաստատվելու գործում աջակցություն և ներկրման լոջիստիկական կենտրոնի գործառույթը արտահանման լոջիստիկայով փոխարինում, էներգետիկական ինքնաբավարարման ձգտում,
- Առողջ միջավայրի համար – կանաչ տարածքի կառավարում, ջրի ռեսուրսների և պինդ մնացորդների կառավարում, էներգոարդյունավետության կողմնորոշում, կլիմայի փոփոխությունների ռիսկերի կառավարում, օդի որակի կառավարում,
- Արդյունավետ և գործուն կառավարում իրականացնելու համար՝ բանական և ներդաշնակ քաղաքային նախագծում, հանրային սերվիսների ժամանակակից ենթակառույցի ստեղծում և պարզեցված մուտքի ապահովում, կայուն զարգացման աջակցություն, սոցիալական անհավասարության փափկեցում, հասարակության ակտիվ ընդգրկվածություն քաղաքի կառավարման մեջ և գործունեության թափանցիկություն, պարզ և չափելի արդյունքների կողմնորոշում, ազգային, տարածաշրջանային և միջազգային գործառույթների ակտուալացում:

Դրա հետ միասին, լավ ենք հասկանում մայրաքաղաքի բյուջեի ներկայիս հնարավորությունները և այդ պատճառով ծրագրի իրականացման գլխավոր առանցք ենք տեսնում տնտեսական կարողության դինամիկ աճը, ինչը ֆինանսական օպտիմալացման հետ միասին, հնարավորություն կտա իրատեսություն դարձնել անվանված պլանները:

Զարգացում և տնտեսություն

2. ***Խնդրում ենք, համառոտ նկարագրեք քաղաքի երկարաժամկետ տնտեսական զարգացման Ձեր տեսակետը/պլանը (եթե այդպիսին ունեք):***

Մեր գործնական պլանը հենվում է «Վրացական երազանք» ծրագրի հետ համադրված զարգացման հարթակին, որը կազմված է 7 հանգուցային սկզբունքից.

- Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկարաժամկետ և կայուն զարգացումը, ավանդաբար, հենվում է չորս հանգուցային բաղադրիչների վրա՝ առաջընթաց հասարակական, տնտեսական, էկոլոգիական և կառավարչական ոլորտներում: Ինտեգրված մոտեցման սկզբունքը նախատեսում է այս չորս բաղադրիչների գերակայությունների ճիշտ հանրագումարում, քանզի անգամ որևէ մեկի անտեսումը կառաջացնի նշանակալից հիմնախնդիրների կուտակում, ինչը շատ լավ երևում է Թբիլիսիի գործող կառավարության գործունեության օրինակի վրա:
- Անցած տարիների պրակտիկան պարզորոշ ցույց տվեց, ինչ արդյունքներ է բերում քաղաքականությունում խստությունը և այլընտրանքի բացակայությունը: Մեր ծրագրի երկրորդ նշանակալից սկզբունքը ճկունությունն է, ինչը նախատեսում է ճյուղային արհեստավարժների և լայն հասարակայնության ակտիվ ընդգրկվածությունը կառավարման շրջանառության (այսպես կոչված PDCA) բոլոր էտապներում: Արդյունքում կստանանք ծրագիր, որը առավելագույնս համապատասխանում է հասարակության ամենահրատապ հետաքրքրություններին:
- «Ինչ-որ չես չափի, չես բարելավի» - կառավարման տեսության այս հայտնի թեզը որպես հիմք դրված է չափելի արդյունքների սկզբունքում: Մեր նպատակներն արտացոլվում են կոնկրետ ցուցիչներում, ընթացիկ և թիրախային նշանակություններով՝ բոլոր քաղաքացիները կունենան ձեռք բերված արդյունքների օբյեկտիվ գնահատման հնարավորություն:
- Վերհսկիչ ցուցիչների սկզբունքը ենթադրում է ընդհանուր առաջընթացի գնահատման մի քանի հանգուցային ցուցանիշ, որն էլ էականորեն ներկայացնում է կառավարության տնտեսական հաջողությունը: Այս ցուցիչները ընտրվում են ելնելով հասարակության պատվերից:

- Քաղաքի տնտեսական զարգացման գերակայող խնդրի ֆոնի վրա ուժի մեջ է մնում մշակութային ժառանգության պահպանման անհրաժեշտությունը: Այս սկզբունքը կորոշվի մայրաքաղաքի 21-րդ դարի արտաքին տեսքի ձևավորման ժամանակ:
- Մեր նախաձեռնությունները պարունակում են զարգացման ինչպես ինտենսիվ, այնպես էլ մի շարք դեպքերում էքստենսիվ միջոցառումներ: Սակայն, միևնույն ժամանակ, քաղաքի աճը չի նշանակում ողջ երկրի մայրաքաղաքում կամ 1-2 ագլոմերացիայում կուտակում, ինչպես դա նախորդ իշխանության էր հարմար: Մենք Թբիլիսիի ազգային առաքելությունը նրանում ենք տեսնում, որ լինի պետության զարգացման առաջատար և օժանդակի մեր երկրի ընդհանուր առաջընթացին:

3. Ձեր կարծիքով, որո՞նք են այն գլխավոր հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են Ձեր քաղաքի տնտեսական զարգացմանը:

Պարզ, չափելի և հասարակության համար նշանակալի նպատակների վերացական, հեռուստատեսային «հաջողություններով» փոխարինման պրակտիկան, ընտրությունների կեղծման և ոչ թե քաղաքացիների հետաքրքրությունների վրա կողմնորոշումը, Թբիլիսիի դեռևս գործող կառավարությանը հնարավորություն տվեց, նվազ չափով հոգալու բիզնեսի խթանիչ միջավայր ստեղծելու մասին: Արդյունքում, մենք ստացանք իրատեսություն, որտեղ չունենք քաղաքային զարգացման պլան, ներդրումային ակտիվություններին աջակցության թափանցիկ և հավասարաչափ մատչելի համակարգ, փոքր և միջին բիզնեսի օժանդակության ինստիտուտներ, օպերացիոն և վենչերային կապիտալին ձեռնհասության պարզեցված սխեմաներ, մատակարարման շղթայի հիմնադրութային օղակների կարգավորման և լրացման տեսադաշտ, ներկրման փոխարինման, տեխնոլոգիաների տրանսֆերի, շուկայում պահանջարկային մասնագիտություններում վերապատրաստման մեխանիզմներ, հանրային-մասնավոր գործընկերության հասարակության համար շահավետ սխեմաներ:

Միաժամանակ, օպտիմալորեն չին գործարկվում տարածաշրջանային և միջազգային մակարդակով գոյություն ունեցող կարողությունը ինչպես բիզնեսի, այնպես էլ զբոսաշրջային տեսանկյունից: Օրինակ, այն փաստը, որ մի շարք խոշոր միջազգային ընկերությունների Անդրկովկասյան գրասենյակները տեղադրված են մեր հարևանների մոտ և ոչ թե Թբիլիսում, միայն քաղաքի գործող կառավարությանը կարելի է մեղադրել, առնվազն անգործության մեջ:

Ընդհանուր առմամբ, այսօրվա դրությամբ փաստորեն առանց անտեսված Թբիլիսիի գլոբալ մրցունակության կարգավիճակի համանման վերլուծության և ուղեկցող քաղաքականության ստուգման, անհնար է ճիշտ զարգացում:

4. Ձեր կարծիքով, որո՞նք են Ձեր քաղաքի հիմնական հնարավորությունները/ գերակայությունները, որոնք կձգտեք կիրառել քաղաքի տնտեսական և քաղաքային զարգացման հասնելու համար:

Մենք ունենք երջանկություն, ապրելու ամենահարուստ պատմական և մշակութային արժեքներ ունեցող քաղաքում: Որքանով մեծ է տարածաշրջանային և աշխարհաքաղաքական իրականության բեռը, այնքան մեծ են նաև հնարավորությունները: Հետևաբար, Թբիլիսիի գլոբալ դիրքավորման և համանման մրցունակության հասնելու համար, անհրաժեշտ ենք համարում ապահովել.

- Տարածաշրջանային բիզնես-կենտրոնի գործառույթի ակտուալացում ուղեկցող ենթակառույցի զարգացմամբ,
- Ինստիտուցիոնալ ներդրումային ակտիվների աջակցություն թափանցիկության և հավասար մատչելիության սկզբունքների արմատավորմամբ, հաշվետվության առաջավոր և համընդհամուր փորձարկված չափորոշիչների կիրառմամբ,
- Զբոսաշրջային գրավչության աճ ոչ միայն Թբիլիսիի մի քանի փողոցների բարեկարգմամբ, այլև ողջ Վրաստանում համապատասխան ենթակառույցի սարքավորմամբ և զարգացմամբ,
- Նորարարական տրանս-ազգային բիզնեսի գրավում գրավիչ օպերացիոն շրջակա միջավայրի և անհրաժեշտ ենթակառույցի առաջարկությամբ,
- Հսկայական մշակութային ասպեկտի կիրառում քաղաքի միջազգային ճանաչման և վարկանիշի բարձրացման նպատակով,
- Ակադեմիական գործառույթի ընդլայնում կրթական և գիտական կենտրոնների ակտիվ աջակցությամբ:

Բնական է, բոլոր այս ուղղությունների ակտիվացումը անհնար է կարճ ժամանակում: Մի շարք դեպքերում, սկզբունքային նշանակություն ունի համապատասխան մասնագիտական որակավորում ունեցող կադրային ռեսուրսի ձևավորումը: Մեր ծրագիրը միանգամայն նախատեսում է ինչպես գոյություն ունեցող մարտահրավերները, այնպես էլ դրա հետ միասին գործարքի ամենաօպտիմալ և գործուն միջոցառումներ:

5. Ինչպիսի՞ն Ձեր բյուջետային գերակայությունները: Խնդրում ենք համառոտ մեկնաբանեք Ձեր բյուջետային քաղաքականությունը:

Թբիլիսիի բյուջեի գերակայությունները որոշելիս բնակչության ընդգրկվածությունը և նրանց հիմնախնդիրների առավելագույն հաշվի առնելը հնարավորություն կտան մշակելու ճիշտ բյուջետային քաղաքականություն: Դրա հետ միասին՝

- Բյուջետային գործընթացի վարումը պետք է իրականանա միջազգային պրակտիկայում փորձարկված մեթոդներով և բարձր որակավորում ունեցող արհեստավարժների կողմից, ինչը նշանակալիորեն կապահովի բյուջեի կատարումը,
- Քաղաքապետարանի կայք-էջի վրա բյուջետային ծախսերի, տեղերների, իրականացված և ապագայում իրականացնելիք նախագծերի մասին տեղեկատվության տեղադրումը մեծացնում է քաղաքի բնակչության իրազեկվածությունը և վստահությունը քաղաքապետարանի նկատմամբ:
- Ք.Թբիլիսիի քաղաքապետարանի պահուստային հիմնադրամի ծախսը կկատարվի թափանցիկ և կօգտագործվի թբիլիսեցիների համար ամենացավալի հարցերի լուծման համար:
- Ծրագրային ֆինանսավորման խնդիրների և բիզնեսի, ինչպես նաև սպասվելիք արդյունքների և արդյունավետության սահմանումը կդառնա քաղաքապետարանի բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունը:
- Պետական գնումների թափանցիկ և գործող օրենսդրության պահպանմամբ իրականացումը, մի կողմից մեծացնում է տենդերին մասնակից սուբյեկտների քանակը, իսկ մյուս կողմից օժանդակում է քաղաքապետարանի և թբիլիսեցիների միջև իրավացիության զգացմունքի հաստատմանը:

6. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի բիզնես և կոմերցիոն ենթակառույցի բարելավմանը, ներդրումների գրավմանը նպաստելու համար:

Թբիլիսիում ժամանակակից լավագույն միջազգային պրակտիկայի հաշվառումով կազմակերպված բիզնես-ենթակառույցի ձևավորում անհնար է առանց քաղաքային զարգացման պլանի ստեղծման: Մեր ծրագրում տրված են այս գործընթացի գլխավոր սկզբունքները: Նման ծրագիրը հնարավորություն կտա բիզնեսին, օպտիմալ կերպով պլանավորելու զարգացման ռազմավարությունը, կատարելու սերվիսների ներդաշնակ մատուցում, ճիշտ գնահատելու ներդրումային կարողությունը:

Իր հերթին, մեր ծրագիրը պարունակում է բիզնեսին աջակցող ենթակառույցի լայն տեսադաշտ՝ մասնագիտական կողմնորոշման կենտրոններ, բիզնես-ինկուբատորներ, կլաստերային կազմակերպությանը աջակցող ինստիտուտներ, ֆինանսական և խորհրդատվական սերվիսների պրովայդերներ, փոքր և միջին բիզնեսին նպաստող այլ միջոցառումներ:

Մենք գտնում ենք, որ տնտեսության զարգացման (և կուտակված հիմնախնդիրների) այսօր գոյություն ունեցող մակարդակը անպայման պահանջում է ինչպես պետության, այնպես էլ տեղական ինքնակառավարումների ակտիվ համամասնակցություն տնտեսական զարգացման գործընթացին: Դրա հետ միասին, լավ ենք հասկանում ազատ և մրցունակ բիզնես միջավայրի

ձևավորման մեջ պետության դերի ճիշտ դիրքորոշումը, որպեսզի թույլ չտանք անսահմանափակ կարգավորման բացասական արդյունքներ:

Քաղաքային զարգացում/քաղաքի նախագծում /բնակարանաշինություն

7. *Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքացիներին ավելի լավ բնակության պայմաններ ստեղծելու համար:*

Այն բանի համար, որպեսզի Թբիլիսիի քաղաքապետարանն ունենա պարզորոշ ձևավորված դիրքորոշում բնակարանատերերի համայնատիրությունների զարգացման կապակցությամբ, հարկավոր է բնակարանատերերի համայնատիրությունների զարգացման ռազմավարության և հետագայում արդեն գործնական պլանի մշակում,
Դրա հետ միասին, անհրաժեշտ է բնակչության իրազեկումը բնակարանատերերի համայնատիրության ինստիտուտի և իրենց իրավունքների մասին, ինչի համար էլ կարելի է կիրառել տարբեր միջոցներ, օրինակ ակտիվ հանդիպումներ բնակչության հետ, տեսահոլովակների պատրաստում և զանգվածային լրատվամիջոցներում տարածում և այլն,
Ֆինանսավորման արդյունավետ համակարգի ստեղծում, որտեղ հիմնախնդրի բացահայտման, աշխատանք մատակարարող ընկերության ընտրության և այլ տեսակ որոշումներ կընդունի համայնատիրությունը և ոչ թե միայն «շենքի նախագահը»,
Վերելակների կապակցությամբ կարելի է համեմատաբար ճկուն սխեմա մշակել: Հնարավոր է արմատավորվի վերելակով տեղաշարժվելու արժեքը վճարելու էլեկտրոնային համակարգ, որը սկզբից նեթ կկարգավորի կոռուպցիոն տիպի գործարքների և գումարների ոչնպատակային ծախսը: Գնի վճարումը հնարավոր է կցված լինի ճանապարհային (այսպես կոչված «Մետրոմանի») քարտերին, ինչը էլ ավելի պարզ և հարմարավետ կդարձնի քաղաքացու վերելակով տեղաշարժը: Արժեքի էլեկտրոնային վճարումը հնարավորություն կտա ճիշտ հաշվարկելու տեղաշարժի քանակությունը, վճարված գումարի չափը և այլն:

Նույնպես բնակարանատերերի համայնատիրությունների ծրագրի շրջանակներում կֆինանսավորվի նաև բազմահարկ տներում տանիքների նորոգման ծրագիրը և ընդհանուր օգտագործման բակերի բարեկարգումը:

8. *Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքի փողոցների մաքրությունը բարելավելու համար:*

Բարեկարգման և մնացորդների կառավարման հետ կապված հիմնախնդիրները արմատախիլ անելու համար կանցկացվեն հետևյալ միջոցառումները.

- Կորոշվի աղբամանների օպտիմալ քանակություն այն բանի համար, որպեսզի բնակչության համար կենցաղային մնացուկների դուրս բերումը լինի առավելագույնս մատչելի: Նաև կսարքավորվեն աշբամանների տեղադրման հատուկ կայաններ, որպեսզի աղբամանների տեղաբաշխումը չխոչընդոտի ճանապարհներին ավտոմեքենաների երթևեկությանը,
- Կմշակվի համապատասխան տեխնիկայի երթևեկության նոր, լավատեսական ժամանակակարգ, որի միջոցով սկզբից ևեթ կխուսափենք ճանապահային երթևեկության ծանրաբեռնումը,:
- Թբիլիսիում գոյություն ունեցող աղբանոցներում կիրականացվի պարբերական մոնիտորինգ, որպեսզի մինչև նվազագույն կրճատվի շրջակա միջավայրի աղտոտման աստիճանը:
- Աղբանոցներում (ինչպես փակ, այնպես էլ գործող) եղած մնացուկների հետագա մշակման համար ներդրումներ գրավելու նպատակով կիրականացվի ակտիվ ներդրումային ընթացակարգ:

Ենթակառույց և տրանսպորտ

9. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել հասարակական տրանսպորտի համակարգի բարելավման համար:

Քաղաք Թբիլիսիի քաղաքապետարանը կմեծացնի տրանսպոորտի համակարգի արդյունավետությունը, ինչը նախատեսում է երթուղային գծերի կատարելագործում, միկրոավտոբուսների և ավտոբուսների տեխնիկական սարքինություն, քանակային օպտիմալացում, ինչը կապահովի բնակչության մատչելի, համապարփակ և անվտանգ տրանսպորտային սպասարկումը: Առաջին փուլում կանցկացվի տրանսպորտային հոսքերի ուսումնասիրություն, որը երթուղիների կրկին լավագույն տեղաշարժի հնարավորություն կտա:

10. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքում ճանապարհային երթևեկության անվտանգության բարելավման համար:

Քաղաքի ճանապարհների և փողոցների որոշակի, տեխնիկապես հնացած մասը նվազ անցողունակ է և կարիք ունի ընթացիկ և կապիտալ նորոգման: Դրանից ելնելով, ծրագիրը նախատեսում է մայրաքաղաքում ճանապարհային ծածկույթի ընթացիկ, կապիտալ նորոգում և շինարարական աշխատանքների անցկացում: Սա կնպաստի ճանապարհների տեխնիկական իրավիճակի բարելավմանը, կկրճատվի խցանների թվաքանակը և դրականաբար կազդի տրանսպորտային ենթակառույցի ցուցանիշների վրա:

11. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք սահմանափակ կարողություններով անձանց քաղաքում տեղաշարժի հնարավորությունների բարելավման համար:

Սահմանափակ կարողություններով (ՍԿ) անձանց համար ենթակառույցի հարմարեցման նպատակով կիրականացվեն հետևյալ միջոցառումները. ՍԿ անձանց համար ճանապարհի երթևեկային մասի (այդ թվում վերգետնյա և ստորգետնյա անցումները), հանգստյան գոտիների, հասարակական տրանսպորտի կայանման տեղերի հարմարեցում, որով նրանք կկարողանան ազատ տեղաշարժվել անկախորեն, օգտվել հասարակական կուտակման տեղերից և օբյեկտներից և այլն:

Մշակույթ և կրթություն

12. Ի՞նչ ծրագրեր կիրականացնեք մշակութային կյանքի բարելավման համար::

Մայրաքաղաքում մշակույթի ոլորտի զարգացման համար առաջիկա 4 տարիների ընթացքում ք. Թբիլիսիի քաղաքապետարանի հիմնական գերակայությունները կլինեն.

- Մայրաքաղաքում մշակույթի ոլորտի զարգացման աջակցություն և լայն հասարակության համար մատչելիության ապահովման նպատակով երկարաժամկետ ռազմավարության մշակում,
- Մշակույթի ոլորտի զարգացման աջակցություն և լայն հասարակության համար մատչելի ռազմավարության և ծրագրերի մշակում անմիջականորենն մշակույթի ոլորտի տարբեր ուղղությունների ներկայացուցիչների և հասարակության շահագրգիռ խմբերի մասնակցությամբ,
- Մայրաքաղաքի մշակութային կյանքի մատչելիության ապահովման համար նշանակալի ուշադրություն կհատկացվի Թբիլիսիի ծայրամասային և նոր միացված թաղամասերում մշակութային միջոցառումների կազմակերպմանը, տարբեր ուղղությունների կենտրոնների աջակցությանը և թաղամասային նախագծերի իրականացմանը:
- Կանցկացվեն արդարացի և ժողովրդավարական սիստեմատիկ մրցույթներ արվեստի տարբեր ուղղություններով. Գրականություն, նկարչություն, դասական, ազգագրական և ժամանակակից երաժշտություն, տեսողական և կատարողական արվեստ և այլն:
- Մշակույթի ոլորտում նոր ծրագրերի արմատավորմանը զուգահեռաբար մայրաքաղաքի քաղաքապետարանը կհոգա ավանդական նախագծերի բարելավման և զարգացման, ինչպես նաև դրանց ժամանակակից պահանջներին հարմարեցնելու մասին:

13. Ձեր իրավասության սահմաններում, ինչպե՞ս կգործեք կրթության մատչելիության և որակի բարելավման նպատակով:

Կրթության ոլորտում մեր հիմնական նպատակն է ապահովել որակյալ կրթության մատչելիությունը: Դրա համար.

Մինչդպրոցական կրթության ոլորտում.

- Կմշակվի սաների անհատական կարիքներին կողմնորոշված մանկական մսուր-պարտեզների կառավարման համակարգի ժողովրդավարացման և զարգացման ռազմավարություն, կբարելավվի կառավարման գործընթացում ծնողների և հասարակության տարբեր շահագրգիռ խմբերի մասնակցության հարցը, կվերանայվեն խորհրդակցական մարմնի աշխատանքի նորմերը,
- Կարիքների ուսումնասիրման հիման վրա կպլանավորվեն և կբացվեն նոր մսուր-պարտեզներ: Կմշակվի ինկլյուզիվ կրթությանը աջակցող երկարաժամկետ ռազմավարություն: Ենթակառույցը և ֆիզիկական միջավայը հարմարված կլինեն երեխաների զարգացման տարիքային պահանջներին, այդ թվում ՍԿ ունեցող երեխաների կարիքներին:
- Սաներին մսուր-մանկապարտեզում գրանցելու գործընթացում ի նկատի կառվեն բնակության տարածքային գործոնը, կվերանայվեն խմբերում երեխաների թույլատրելի քանակը, ինչպես նաև երեխաների և դաստիարակի հարաբերակցության նորմերը, որոնց իրականացման գործընթացում կավելանա շահագրիռ խմբերի մասնակցության որակը,
- Կգործարկվի աշխատակիցների մասնագիտական զարգացման արդյունավետ համակարգը, կվերանայվի աշխատակիցների կարգավիճակը, սոցիալական պաշտպանության մեխանիզմները, աշխատանքի վարձատրության և խրախուսման համակարգը,

Ընդհանուր կրթության ոլորտում.

- Հանրային դպրոցների հոգաբարձական խորհրդին մասնակցության մեխանիզմի կիրառմամբ աջակցություն կցուցաբերվի ապաքաղաքականացման և ժողովրդավարացման քաղաքականության անցկացմանը,
- Աջակցություն կցուցաբերվի դպրոցներում մասնագիտության կողմնորոշման և կարիերայի պլանավորման ծրագրի հաջող իրականացմանը,
- Կարմատավորվի ՍԿ ունեցող աշակերտների հարմարված տրանսպորտով սպասարկման ծրագիր.
- Կիրականացվի հանրային դպրոցներում գրադարանների ֆիզիկական միջավայրի արդիականացման ծրագիր, իսկ տեղական նշանակության գրադարանները ներդաշնակված կլինեն ժամանակակից պահանջներին,

- Կֆինանսավորվեն որակյալ կրթության մատչելի, որակյալ դպրոցական կրթության ծրագրերը,
- Կարիքների ուսումնասիրության հիման վրա կհիմնադրվեն արտադպրոցական կրթության կամ/և դաստիարակչական հիմնարկությունների/աշակերտների և երիտասարդական տներ:

Մասնագիտական կրթության ոլորտում.

- Համապատասխան ուսումնասիրությունների հիման վրա կմշակվի և կիրականացվի մասնագիտական կրթության ոլորտում տեղական իշխանության ռազմավարություն և ծրագիր:

Չափահասների կրթություն.

- Շարունակական կրթության սկզբունքների հաշվառումով կիրականացվեն չափահասների կրթության որակյալ ծրագրեր, որոնց շրջանում գերակայող կլինեն ձեռներեցության, փոքր և միջին բիզնեսի դասընթացները: Նշված ծրագրերի իրականացումը որոշվում է տնտեսական զարգացման, քաղաքացիական հասարակության և աշխատանքի շուկայի պահանջների հաշվառումով:

Անվտանգություն և հանցագործություն

14. Ձեր իրավասության շրջանակներում, ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք հանցագործության դեմ պայքարի, հանցանքի կանխարգելման համար:

Գործող օրենսդրությամբ, քաղաքապետարանի իրավասությունը չի ներկայացնում հանցագործության դեմ պայքար: Ք. Թբիլիսում գոյություն չունի մունիցիպալային ոստիկանություն և այս գործառույթը անմիջականորեն կենտրոնական իշխանության արտոնությունն է: Չնայած դրան, ք. Թբիլիսիի քաղաքապետարանը առանձնահատուկ ուշադրություն կդարձնի քաղաքի պուրակների և այգիների լուսավորմանը, որպեսզի գիշերվա ժամերին թբիլիսեցիները առավելագույնս անվտանգ զգան իրենց:

Առողջապահություն և սոցիալական քաղաքականություն

15. Ինչպիսի՞ն կլինի քաղաքում Ձեր սոցիալական քաղաքականությունը և ի՞նչ սոցիալական ծրագրերի իրականացման համար կհոգաք:

Ք.Թբիլիսիի քաղաքապետարանի սոցիալական քաղաքականությունը ուղղված կլինի սոցիալապես անպաշտպան քաղաքացիների, կենսաթոշակառուների, ուսանողների, ՍԿ ունեցող անձանց, երեխաների և այլ կարգի քաղաքացիների սոցիալական պաշտպանության միջոցառումների իրականացմանը, որպեսզի նրանց մոտ թեթևանա ծանր սոցիալական իրավիճակը: Այս նպատակով պլանավորված են հետևյալ հիմնական ծրագրերի իրականացում.

- Ընդլայնված առողջապահության և սոցիալական ապահովագրության ծրագրեր, որով հարյուրավոր քաղաքացիներ կստանան օգուտ,
- Ք.Թբիլիսիում բնակվող սոցիալապես անպաշտպան ընտանիքներում յուրաքանչյուր ծնված երեխայի հաշվով նորածին երեխայի սննդի և խնամքի առարկաների ձեռք բերման համար կտրամադրվի համապատասխանն գումարի վաուչեր,
- Ք. Թբիլիսիում բնակվող սոցիալապես անպաշտպան ընտանիքներում ծնված յուրաքանչյուր 3-րդ, 4-րդ՝ 5-րդ և այլն երեխայի հաշվով տեղի կունենա գոյություն ունեցող օգնությունների նշանակալի աճ,
- Ք. Թբիլիսում բնակվող սոցիալապես անպաշտպան ընտանիքները կոմունալային վաուչերներով օգտվելու ծրագրի շրջանակներում կօգտվեն կրկնապատկված զեղչերով,
- Ք. Թբիլիսում բնակվող սոցիալապես անպաշտպան ընտանիքների և սոցիալապես անպաշտպան կենսաթոշակառուների համար մետրոյով տեղաշարժը կլինի անվճար:

16. Ի՞նչ միջոցառումներ կիրականացնեք Ձեր քաղաքում առողջապահության ընդհանուր ցուցիչների բարելավման համար:

Առողջության պահպանությանը աջակցության համար ամեն տարի կիրականացվի տարբեր ծրագիր, մասնավորապես.

- Պլանավորված են կանխարգելիչ միջոցառումներ, որոնք կօժանդակեն սրտ-անոթային, ինֆեկցիոն և այլ հիվանդություններ առաջացնող ռիսկ-գործոնների կրճատմանը,
- Կկատարվի քաղաք Թբիլիսիի շտապ բժշկական ծառայության նյութա-տեխնիկական բազայի արդիականացում,
- Առողջապահության ոլորտում կմշակվի հատուկ ծրագիր, որը կնպաստի բուժման և ախտորոշման ժամանակակից/նորացված մեթոդների արմատավորմանը,
- Կմշակվի և կիրականացվի հատուկ ծրագիր առողջ կենսակերպի ժողովրդականացման նպատակով:

17. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում անօթևանների սոցիալական պայմանները բարելավելու համար:

Անօթևան քաղաքացիներին կապահովենք ապաստարաններով, որտեղ նրանք հնարավորություն կունենան բավարարելու իրենց բազիսային կարիքները (սնունդ, ապաստարան, հիգիենա), միևնույն ժամանակ ապահովված կլինեն հագուստով և անձնական հիգիենայի անհրաժեշտ առարկաներով:

Էկոլոգիա, ռեկրեացիա և սպորտ

18. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավման համար:

Թբիլիսիում առողջ էկոլոգիական միջավայրի ձևավորման համար կիրականացվեն հետևյալ կոմպլեքս միջոցառումները.

- Ք.Թբիլիսիի քաղաքապետարանի էկոլոգիայի և կանաչապատման քաղաքային ծառայությունը, համապատասխան ծառայությունների հետ միասին, կանցկացնի քաղաքի էկոլոգիական իրավիճակի մոնիտորինգ,
- Մոնիտորինգի հիման վրա տեղի կունենա քաղաքի էկոլոգիական իրավիճակի գնահատում և քաղաքի տարածքային պլանավորման համապատասխան նոր հայեցակարգի մշակում, քաղաքային-ճարտարապետական նախագծումների հետ միասին, կանաչ գոտիների բարեկարգում և հանգստյան գոտիների նախագծումների հաշվառումով,
- Տեղի կունենա անցած տարիներին պետության կողմից սեփականաշնորհված հողահանդակների, այսպես կոչված «թեժ կետերում» տրված շինարարությունների և կանաչ տնկիների հատման թույլտվությունների օրինականության ուսումնասիրում,
- Ուսումնասիրված նյութերի հիման վրա տեղի կունենա փոխհատուցման նոր հանգստյան գոտինների լանդշաֆտների նախագծում (Թբիլիսիի ծով, Կրիայի լիճ, Ծավկիսի, Դիդոմի զբոսայգի, Ասաթիանի №10. Թբիլիսի մերձակայք և այլն):
- Քուռ գետի և Թբիլիսում գոյություն ունեցող փոքր գետերի աղտոտման աստիճանի կրճատման նպատակով կմշակվի ռազմավարություն,
- Կմշակվի ծրագիր Թբիլիսիի մթնոլորտային օդի պաշտպանության մասին, որի նպատակը կլինի եղած հիմնախնդիրների կարգավորման ուղիների անվանում և դրա հիման վրա մունիցիպալային քաղաքականության անցկացում,
- Կսարքավորվեն քամուց պաշտպանիչ գոտիներ Դիդի Դիդոմի, Նուցուբիձեի բարձրավանդակի և օդանավակայանի բնակեցված տարածքներում,

- Կիրականացվի Գլդանի և Լիլոյի աղբանոցների պահածոյացում ժամանակակից չափանիշերին/նորմերին համապատասխան, որպեսզի մինչև նվազագույն իջեցվի աղբանոցների միջավայրի աղտոտման աստիճանը: Թբիլիսիից հեռացված կկառուցվեն նոր ժամանակակից աղբանոցներ:

19. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքում ռեկրեացիոն գոտիների, զբոսայգիների ընդարձակման և զարգացման համար:

Քաղաքի սահմաններում, զարգացման գլխավոր պլանին համապատասխան, կստեղծվեն նոր հանգստյան և կանաչապատման գոտիներ, այսպես կոչված «Կանաչ գծեր»: Դրա հետ միասին, կկառուցվեն զբոսայգիներ և նոր պուրակներ, այսպես կոչված «Կարմիր գծեր», որտեղ արգելված կլինի շինարարությունը և ծառերի հատումը: Դրանց անձեռնմխելիությունը պաշտպանված կլինի համապատասխան օրենսդրությամբ:

20. Ի՞նչ մտադրություններ ունեք սպորտի և առողջ կենսակերպի զարգացման և մարզական-ռեկրեացիոն ենթակառույցի բարելավման համար:

Թբիլիսիի քաղաքապետարանը, որպես տեղական ինքնակառավարման մարմին, իր իրավասության շրջանակներում, (տեղական ինքնակառավարման 16-րդ հոդվածի, 2-րդ կետի, „S“ ենթակետին և նույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան) իրավասու է օժանդակելու զանգվածային սպորտի զարգացմանը, ապահովելու մարզական բազաների և օբյեկտների գործունեությունը և օժանդակելու դրանց շինարարությանը:

Շնորհված իրավասության և սպորտի պետական քաղաքականության շրջանակներում, Թբիլիսիի քաղաքապետարանը կօժանդակի մարզական օբյեկտների բարելավման և շինարարության գործընթացին, ինչի համար կմշակվեն համապատասխան ռազմավարություններ հետևյալ ուղղություններով.

- Մարզական ենթակառույց,
- Սպորտ և առողջ կենսակերպ,
- Զանգվածային սպորտի մատչելիություն:

Թբիլիսիում սպորտի տարբեր տեսակների համար համապատասխան կարողություն և ավադույթ գոյություն ունի, ինչը անպայման պետք է նախատեսված լինի մարզական ենթակառույցի շինարարություն պլանավորելու գործընթացում:

Թբիլիսիում անպայման կլինի մարզական ենթակառույցի զարգացման ցանցային մոդելի մշակում: Այս մոդելի հիմնական սկզբունքն է, այնպես անել քաղաքի ցանցայնացումը, որ մարզական օբյեկտները հավասարաչափ բաժանված լինեն ըստ բնակչության և տեղադրությունների:

Մարզական ենթակառույցի ցանցային մոդելը մշակվել է եվրոպական չափորոշիչների համաձայն և նման է բազմաթիվ եվրոպական քաղաքներում արմատավորածին, օրինակ, Անգլիայում, Ֆրանսիայում, Ֆինլանդիայում, Իսպանիայում և այլն:

Մարզական ենթակառույցի զարգացում, զանգվածային և բարձր ձգտումների սպորտի աջակցությունը կլինի Թբիլիսիի քաղաքապետարանի գերակայությունը, որով կօժանդակի բնակչության ընդգրկմանը մարզական/ֆիզիկական ակտիվություններին և նրանց առողջացմանը:

Թբիլիսի

21. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում քաղաքում անցկացնել հետիոտնի տեղաշարժի անվտանգությունը և հարմարավետությունը բարելավելու համար:

Քաղաքում հետիոտն տեղաշարժի անվտանգության և հարմարավետության բարելավման համար անհրաժեշտ է, առաջին հերթին, հետիոտն զբոսնողների համար արահետների կարգավորումը: Դրա հետ միասին մայթերը փուլ առ փուլ պետք է ազատվեն ավտոմեքենաների կայանումներից: Պետք է կարգավորվեն լուսանշանները հետիոտն զբոսնողների համար, ինչպես նաև պլանավորվում է կույրերի համար ձայնավոր լուսանշանների պատրաստում, ՍԿ անձանց համար արահետների և եզրաքարերի հարմարեցում:

Կմշակվեն փողոցների համարակալման և ցուցանշանների տեխնիկական պարամետրեր, որոնք հետիոտն զբոսնողների համար պարզորոշ հասկանալի և հիշելի կդառնան և նրանց համար կստեղծեն դրական տրամադրվածություն:

22. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել քաղաքում ավտոմոբիլային երթևեկության կարգավորման և ճանապարհային իցանների կրճատման նպատակով:

Քաղաքում ավտոմոբիլային երթևեկության կարգավորման և խցանների կրճատման համար անհրաժեշտ է հետևյալ միջոցառումների անցկացումը.

- Գոյություն ունեցող տրանսպորտային հոսքերի ուսումնասիրում (ամեն տեսակի տրանսպորտի) աշխարհի զարգացած երկրներում (օրինակ, Ֆրանսիա, Գերմանիա) փորձարկված մեթոդոլոգիայով,
- Տրանսպորտի երթևեկության ինտենսիվության, հոսքերի երթևեկության ռեժիմների և երթևեկության անվտանգության իրավիճակի սահմանում, ինչը հետագայում պետք է հաշվի առնվի ք. Թբիլիսիի գլխավոր պլանի մշակման ժամանակ,

- Ճանապարհների և դրանց վրա տեղաբաշխված շինությունների (կամուրջների, էստակադների, գազամուղների, հենարանային պատերի և այլն) գույքագրում և ախտորոշում դրանց փաստացի տեխնիկական իրավիճակը որոշելու նպատակով:

Դրա հետ միասին, այսօրվա դրությամբ քաղաքում գոյություն ունեցող իրավիճակի բարելավման համար անհրաժեշտ է որոշ գերծանրաբեռնված տրանսպորտային հանգույցի բարելավում: Մասնավորապես,

- Պուշկինի փողոցի վրա երկկողմ երթևեկության վերականգնում, լրացուցիչ ճանապարհի ընդլայնում չորսգծային երթևեկության հաշվառումով այնպես, որ չշոշափի գոյություն ունեցող մշակութային-հնէաբանական հուշարձանը,
- Երկու էստակադի սարքավորում Թամարաշվիլիի և համալսարանի փողոցների հատման կետում, որպեսզի տրանսպորտի տեղաշարժը կատարվի առանց լուսանշանի,
- Հանգույցի բացում երկու մակարդակով՝ Սաբուրթալոյի փողոցի և Կարտոզիայի փողոցի հատման վրա,
- Գալաքտիոնի կամրջի հետ Քուռ գետի ձախ ափնյակից վերելքի սարքավորում աջափնյակ անցնելու համար,
- Թամար թագուհու կամրջի հետ ճանապարհի լայնացում թունելով,
- Ճավճավաձեի փողոցին գոյություն ունեցող հանգույցի վրա (Կավսաձեի փողոցի և Մզիուրիից դուրս եկող նորերս սարքավորված փողոցի հատում) երթևեկության ռեժիմի բարելավում լուսանշանների կարգավորման հաշվին,
- Քուռ գետի ափերին տրանսպորտի միակողմանի երթևեկության կազմակերպման համար լրացուցիչ կամրջային անցումների սարքավորում,
- Քաղաքում շրջանցիկ տրանզիտային երթևեկության անջատում քաղաքի շրջանցիկ ճանապարհների վրա, քաղաքի կենտրոնական շրջանը ծանրաբեռումից թեթևացնելու նպատակով,
- Հեծանվային արահետների կարգավորում:

Դրա հետ միասին, ծրագիրը նախատեսում է մայրաքաղաքում ճանապարհային ծածկույթի ընթացիկ, կապիտալ նորոգումներ և շինարարական աշխատանքների անցկացում:

Մայրաքաղաքում խցանների ստեղծման, ինչպես նաև ոչճիշտ կայանումը, կայանման հիմնախնդիրները կարգավորելու համար տարբեր թաղամասերում կարևոր է ստորգետնյա և բազմահարկ ավտոկայանների (կայանման տեղերի) սարքավորումը, որոնք չափից ավելի արդյունավետ են ճանապարհների խցաններից խուսափելու տեսակետից:

Առանձնահատուկ ուշադրության կենտրոնացման կարիք ունի բազմահարկ բնակելի և առևտրական նշանակության շենքերի շինարարության ժամանակ նշված շենքերում ստորգետնյա կայանման տեղերի սարքավորման հարցը, ինչպես դա արդեն գործում է արտասահմանյան համարյա բոլոր մեծ քաղաքներում:

23. Ի՞նչ միջոցառումներ եք մտադիր անցկացնել անտեր կենդանիների հիմնախնդրի կարգավորման համար:

Թբիլիսիում գոյություն ունեցող անտեր կենդանիների հիմնախնդրի կարգավորումը կիրականացվի աշխարհում փորձարկված մեթոդներով, այդ թվում.

Առաջին փուլում կկատարվի կենդանիների հաշվառում և տվյալների բազայի ստեղծում, իսկ հետո դրանց իրավիճակի անընդմեջ մոնիտորինգ, հաջորդ փուլում կիրականացվի դրանց բռնում և բուժում և միայն անբուժելի և վարակիչ հիվանդությունների դեպքում կննջեցվեն: Միևնույն ժամանակ, տեղի կունենա բազմացման կրճատում արհեստական-դեղորայքային ձևով,

Դրա հետ միասին տեղի կունենա այն անձանց և ոչկոմերցիոն կազմակերպությունների աջակցություն, որոնք զբաղված են անտեր կենդանիների խնամքով-տիրությամբ: Դրանում ենթադրվում է նշված անձանց թե կազմակերպությունների խրախուսում և օժանդակության ցուցաբերում տարբեր ձևով, օրինակ. Կենդանիների սնունդ և դեղորայք տալ, լրացուցիչ ճաղավանդակներ կառուցել և այլն:

24. Ի՞նչ միջոցառումներ եք պլանավորում անցկացնել անավարտ շինարարությունների, վթարային շինությունների հիմնախնդիրների կարգավորման համար:

Ամորտիզացված և վթարային բնակարանների հիմնախնդիրը այսօր ամենասուր հարցերից մեկն է Թբիլիսիում: Հարցի մասշտաբից ելնելով, դրա շտապ լուծումը , ցավոք, անհնար է: Սակայն գոյություն ունեցող իրատեսության անտեսումը և միայն կոսմետիկական քողարկումը, ինչը այսքան տարվա ընթացքում կատարվում էր, անթույլատրելի է:

Մեր ծրագիրը կողմնորոշված է բնակատեղի փուլային նորացմանը և ուղեկցող ենթակառույցի զարգացմանը: Նման փուլը աշխարհի շատ երկրներ արդեն անցել են և կուտակվել է որոշակի փորձ: Նշանակալից է, որ անգամ Վրաստանից առավել ուժեղ տնտեսական կարողության երկրներում էլ, որտեղ բնակության հարցի անտեսում կատարվեց, առաջացան հողային տիպի բնակավայրեր: Այդ պատճառով մենք շատ սուր գիտակցում ենք հիմնախնդրի էությունը և սպասվելիք, ինչպես դրական, այնպես էլ բացասական արդյունքները: Այդ նպատակով պլանավորում ենք, ակտիվորեն աշխատենք ներդրումային ռեսուրսներով հիմնախնդրի ժամանակին և լավատեսորեն կարգավորման համար:

25. Ի՞նչ միջոցառումներ կանցկացնեք քաղաքի պատմական արտաքին տեսքը պահպանելու համար:

Հին Թբիլիսիի մշակութային ժառանգությունը կլինի Թբիլիսիի քաղաքապետարանի գլխավոր գերակայող ուղղություններից մեկը: Նշվածից ելնելով, առաջին հերթին, կմշակվի Հին Թբիլիսիի վերականգնման համապարփակ պլան, որը կպարունակի վերականգնման կոնկրետ սխեմա: Դրա համար կվերլուծվի շենքերի մշակութային ժառանգության հուշարձանների կարգավիճակի հարցը, ինչի վրա հենվելով կիրականացվի վերականգման գործընթացն այնպես, որ մի կողմից պահպանվի հին քաղաքի արտաքին տեսքը (ավտենտարությունը) և մյուս կողմից, հաշվի առնվեն հասարակության ժամանակակից կարիքները:

Տեղի կունենա հանրային-մասնավոր գործընկերության (PPP) ձևերի կիրառում, որի համաձայն, քաղաքապետարանը ապահովում է ներդրողներին հանրային ենթակառույցի կարգավորմամբ և հաղորդակցության հանգեցմամբ: Իսկ ներդրողները քաղաքապետարանի հետ համաձայնեցված պայմաններով կատարում են վերականգնում:

26. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Թբիլիսիի շրջանցիկ երկաթգծի շինարարության հարցին:

Մենք գաղափարի մակարդակով կիսում ենք Թբիլիսիի շրջանցիկ երկաթգծի նախագիծը: Չափից ավելի նշանակալից է երկաթգծի ճանապարհի տեղափոխումը քաղաքի ծայրամաս, որպեսզի ազատվի կոմերցիոն կամ հասարաական նշանակության տարածք քաղաքի կենտրոնական թաղամասերում, որտեղ հնարավոր կլինի իրականացնել բազմաթիվ հետաքրքիր նախագիծ: Թերևս, Վրաստանի երկաթգծի վարձակալված “MS Mobility Consultants”-ի կողմից անցկացված հետազոտությունը ցույց տվեց, որ գոյություն ունեցող նախագիծն ունի նշանակալից թերություններ: Մասնավորապես.

- 2010 թվականի հունիսին նախագծի իրականացումը սկսվեց առանց նախագծի տեխնիկա-տնտեսական հիմնավորման (Feasibility Study) և այն այսօր էլ գոյություն չունի՝ այն ժամանակ, երբ արդեն ծախսվել է նախագծի արժեքի 64% - 213 միլիոն ԱՄՆ դոլար: Այս ամենը հանդիսանում է կանոնների լրիվ անտեսում, անվտության և բնակչության նկատմամբ միանգամայն սառնասրտության դրսևորում,
- Նախագծում նախատեսված չեն էկոլոգիական անվտանգության, մասնավորապես, խմելու ջրի հնարավոր աղտոտման ռիսկերը՝ շրջանցիկ երկաթգծի հատվածը մինչև Թբիլիսիի ծով նվազագույն է (900 մետր) և երկաթգծի վրա վթարները կամ այլ տեխնիկական հիմնախնդիրները, ծովի ուղղությամբ կտրտված թեքումների պատճառով, կարող են առաջացնել Թբիլիսիի ծովում նավթամթերքների հոսք,
- Հետագիծը, որը կիրառում է երկաթգծի նշված շրջանցիկ ճանապարհը, Թբիլիսիի ապագայի զարգացման ռազմավարական նշանակության տարածքի մասն է և դրա կիրառումը այս նպատակի համար հակադրվում է Թբիլիսիի զարգացման հիմնական սկզբունքին,

- Նախագծում նախատեսված չեն տեխնիկա-տնտեսական օպտիմալացման ասպեկտները, մասնավորապես, էլեկտրաքարշի ետ վերադարձի հատվածը, ինչը նշանակալիորեն թանկացնում է երկաթուղային սպասարկումը:

Չնայած թերություններին, Թբիլիսիի բնակչության շահերի հաշվառումով, ճյուղի մասնագետների հետ միասին հասարակության բոլոր շահագրգիռ խմբերի ակտիվ մասնակցությամբ, անհրաժեշտ է 18 ամսվա ընթացքում (Վրաստանի կառավարության 2014 թվականի մարտի 26-ի կարգադրությամբ) նորացվի Թբիլիսիի շրջանցիկ երկաթգծի նախագիծը և կարճ ժամկետում սկսվի նրա իրականացումը:

Այդպիսով, պետք է ուղղվեն գոյություն ունեցող թերությունները և շարունակվի այս նախագծի իրականացումը:

27. Ինչպիսի՞ն է Ձեր դիրքորոշումը Վակեի զբոսայգու մոտակայքում պլանավորված հյուրանոցի շինարարության հարցին:

Մեր գերակայություններից մեկը մայրաքաղաքի էկոլոգիական միջավայրի պահպանումն է, հանգստյան գոտիների նորացումը, ընդլայնումը և թբիլիսեցիների համար կյանքի առողջ միջավայրի ստեղծումը:

Ցավոք, քաղաքի նախկին իշխանությունը հասարակության շահերը անտեսեց և առանց համապատասխան հիմնավորման տվել է շինարարության շատ թույլտվություններ: Մենք խստորեն կվերահսկենք այնպիսի շինարարությունների թույլտվությունները, որոնք կրճատում են և վտամգ են ստեղծում քաղաքի կանաչապատված տարածքներին:

Մեզ մայրաքաղաքի նախկին կառավարողներից ժառանգություն հասան անկառավարելի շինարարություններ, որոնք այսօր օրինական են համարվում:

Քաղաքի կառավարություն գալուն պես կսկսենք բանակցություններ ընթացիկ շինարարությունների այն սեփականատերերի հետ, ովքեր հանգստյան գոտիներում ստացել են շինարարության թույլտվություն: Կփորձենք գտնել այլընտրական ուղիներ (օրինակ, տարածքի փոխարինում), որպեսզի խուսափենք Թբիլիսիի կանաչ ծածկույթի ոչնչացումից:

Որքանով մեզ հայտնի է, Վակեի զբոսայգում հյուրանոցի շինարարության հարցի շուրջ ընթանում է դատական վեճ շինարարության դեմ: Հատկանշական է, որ այս տարածքի համար քաղաքապետարանի համապատասխան ծառայությունը կիրառել է հատուկ գոտային համաձայնություն և զարգացման աճող քաղաքաշինության պարամետրեր, մասնավորապես, զարգացման ինտենսիվության ուռճացված գործակիցներ, որոնք պետք է բավարարեն քաղաք Թբիլիսիի տարածքի կիրառման և զարգացման կարգավորման կանոնները (քաղաք Թբիլիսի սակրեբուլոյի 2009 թվականի մարտի 27-ի N 4-13 որոշումը «ք. Թբիլիսիի տարածքի կիրառման և զարգացման կարգավորման կանոնների հաստատման մասին»: Հոդված 24): Այս կանոնում տրված պահանջերից ելնելով քաղաքապետարանը չի բավարարել ոչ մի հարց:

Նշված հարցը բողոքարկված է դատարանում: Հետաքրքիր է նաև այն, թե ինչպիսի որոշում կընդունի դատարանը հանգստյան գոտու պահպանման տեսանկյունից: Կարծում ենք, հնարավոր է ներդրողի հետ բանակցությունը տարածքը փոխանակելու տեսանկյունից, որպեսզի նա այլ տեղում իրականացնի շինարարություն և փրկենք Վակեի զբոսայգին: